

Տան մը տնտեսութեան սխալնունքներէն զգուշահալու համար կարեւոր գիտելիք :

Բ

Տուն մը կարգաւորելու համար պէտք է որ տանտէրը պատրաստէ կահկարասիքը իր աստիճանին յարմար վայել չուժեամբ . և այս ըստ չափու ըլլալու համար պէտք է իր պատրաստ ունեցած ստակին չափը դիտէ , և այնպէս պատրաստ ստակով զնէ ամէն բան : Վասն զի աւելի լաւ է հանգիստ սիրու ունենալ քան թէ տանը մէջ վայելուչ զարդեր ունենալ ու սիրու հոգերու մէջ մաշեցնել . որովհետեւ կը հանգըպի որ իր միտքը դրած հաշուով ստակ ձեռք չկրնար ձգել ու պարտքը հատուցանել : Եւ դարձեալ յայտնի է որ պարտքով գնածը միշտ սուղ կ'ըլլայ . վասն զի այն ստակին ուշացնելուն շահն ալ վրան դրած՝ այնպէս կը պահանջէ ծախողը գնածիդ գինը : Երբ յոյս ունիս որ քիչ ժամանակէն ստակ պիտի ձեռք ձգես , փոխանակ պարտքով սուղ զնելու , և եռքը ստակը վճարելու համար տագնապելու , լաւագոյն է որ քիչ մը ժամանակ դրեզ դրես վայելուչ կազմուածքներէն , ու հանգարա սրտով ապրիս :

Տան կարասեաց մէջ աւելի մտադրութեան արժանի անկողինն է : Մահճակալով անկողինը Եւրոպիոյ մէջ հասարակաց սովորութիւնն է . ինչուան զեղացիք ալ նոյնպէս կը գործածեն , բոլոր զինուորանոցներուն մէջն ալ անկողինները մահճակալով են . այնպէս որ գետնի վրայ անկողին բռելը ամեննեին քաղաքականութենէ զուրս կ'երևայ : Բայց այսպէս ընելու համար առանձին անկողնոց խուցեր պէտք է ունենալ : Անկողինը առողջարար ըլլալու համար բրդոյն հետ մէկտեղ մազ ալ կը զնեն . մէջ տեղը մազ երկու երեսը բուրդ : Բայց հիմա շատ յաճախած է զսպանակէ անկողինը , որուն երեսը բրդեայ կամ

փետուրէ բազմոց կը փոեն , որ միշտ չփակ կը մնայ , կարգաւորեալ շտկելու աշխատանք պէտք չըլլար . և կարգաւորեալ անկողինի ձեն ալ միշտ կը պահէ : Սենեկի բազմականներն (սէտիրներ) ալ եթէ այսպէս զսպանակով շինուի վրանին բարակ բազմոց (շիլթէ) զնելով , թէ նատողները հանգիստ կը նեն , և թէ որչափ որ ալ վրան նստին , ելլեն՝ բազմականները դարձեալ մաքուր յարգարուն կը մնան : Իսկ զլխի պզտի բարձը մազէ ըլլալը օգտակար է որ զլուկը չափազանց չի տաքցըներ . մանաւանդ տղոց համար խիստ աղէկ է . որովհետեւ բուրդը կամ փետուրը չափէ դուրս կը տաքցընէ զլուկը :

Իսկ ուրիշ տան զարդերը ըստ սովորութեան քաղաքին և իր վիճակին համեմատ պէտք է ըլլայ . և աւելի կազմուածոց ամրութեանը պէտք է ուշ զլուկը , քան թէ արտաքին անոնց տեսքին : Եւ ամնուր հիւսուածքը կամ շինուածքը թէ և քիչ մը սուղ ալ ըլլան իրենց զիմացկունութեամբը աւելի աժան կ'իյնան :

Պատերը ծաղկեայ թղթով պատել հիմայ սովորութիւն եղած է , բայց պէտք է զիտնալ որ թացութիւն ունեցող պատի վրայ պէտք է բարակ փայտէ շրջանակ հաստատել ու ցանցառ կտաւ վրան քաշած , կտաւին վրայ ծաղկեայ թուղթը կպցնել . որպէս զի թուղթը պատէն հեռու մնայ : Իսկ նոր պատին վրայ ծաղկեայ թուղթ անցընելու համար՝ պէտք է նախ անպիտան թուղթ պատին վրայ կը պցընել , և եռքը անոր վրայէն ծաղկեայ թուղթը կ'պցընել : Կանաչ թաւիշաւոր (խատիֆէլի) թուղթ թին համար պէտք է զիտնակ որ եթէ պղնձի ժանգով գունաւորած ըլլայ , որովհետեւ թաւիշը փոշի կը բանէ , զանոնք մաքրելու ատեն՝ պղնձի ժանգով ներկած անտեսանելի մանր մասունքը փոշոյն հետ մէկտեղ կը տարածուի խուցին մէջ . որ որչափ որ ալ քիչ ըլլայ , շնչառութեան ատեն ծծելով զանոնք , կրնան թիւնաւորուիլ տղափ և տկար կուրծք ունեցողները , և զնասուիլ

առանց իմանալու պատճառը : Աւելի ընտրելի են փայլուն ծաղկեայ թղթերը՝ որ փոշի չեն բոներ, ու դիւրաւ աղեկ կրնան մաքրուիլ կամ պարզ փետուրէ աւելով և կամ՝ եթէ ծխէ քիչ մը սկցած ըլլայ, թեթև մը խոնացուցած սպունգով :

Հիմակուան ժամանակս պատերուն վրայ հայելի հաստատելու սովորութիւնը յաճախած է . ուստի պէտք է զիտնալ որ հայելին թացութենէ կ'աւրուի . անոր համար եթէ պատը թացութիւն ունենալու վտանգ կայ, պէտք է հայելւոյն կոնըկի պատը տախտակամած ընել՝ ու այնպէս հայելին տեղաւորել:

Խոհանոցի ամանները տան մը հարկաւոր կարասեաց կարգն են . քիչ տարի առաջ բոլորն ալ պղնձէ կ'ընէին . բայց հիմա կը գործածեն նաև թափծու երկրթէ ամաններ մէջերնին ապակաբուած . որոնց օգտակարութիւնը այն է՝ որ եղոտ և թթու կերակուրներէ չեն աւրուիր, և կերակուրներն ալ ժանգոտելու վնասակարութիւնը չեն ունենար: Բայց դիմացկունութեան կողմանէ պղղնձեղէն ամաններն ընտրելի են . որոնք թէ և քիչ մը սուղ կ'ըլլան, բայց երկար դիմանալով՝ աւելի աժան կ'ընան, և զրառանց ալ մաքուր փայլուն հաճելի տեսք կ'ունենան, և ամէն տեսակ կերակուր եփելու ալ յարմար են: Իսկ կերակուրը ժանգոտելու վտանգէն ալ զգուշանալու համար պէտք է յաճախ անագել, եւ չթողուլ որ մէջերնին պաղի եփած կերակուրները: Իսկ թափծու երկրթէ կամ հողէ պտուկները կը գործածուին ջուր տաքցնելու և ջրոտ և հնտեղէն կերակուրները եփելու: Եթէ արկած կերակուրը եթէ ուշադրութեամբ: Եւ որչափ աւելի յաճախ սըրբուին ասոնք, այնչափ աւելի երկար ատեն նորի պէս կը մնան: Տան մը մէջի ամէն կահ կարասիքը եթէ ուշադրութեամբ յաճախ մաքրուելու ըյլան, շատ տարիներ նոր, մաքուր կը մնան: Բայց եթէ անհոգութեամբ թողուին, մէկ երկու տարիէն ամէն բան հինցած աղտոտ կ'երևան . որուն պատճառը ժամանակը չէ, այլ անհոգութեամբ աղտոտ գործածեն է:

Տունը կարգաւորեալ շտկելէն ետքը, ծուխը և փոշին ժամանակաւ անզգայի կերպով կը սեցնեն պատերը ու տախտակամածները . այնպէս որ հարկ կ'ըլլայ ներկերը նորոգելու . այսպէս նոր ներկած սենեկի մէջ մէկէն բնակիլը վնասակար է, յաճախ զլիսուցաւ կը

պատճառէ . ինչուան երբեմն կաթուած ալ կ'ըլլայ նոր ներկերէն ելած գոլոշիքէն վնասուելով: Մանաւանդ թէ՛ լաւ կ'ըլլայ որ ջանացուի չորնալէն ետքն ալ չնջելու բոլորովին խեժին հոտը, որ ինքիրեն դժուարաւ կը չնջուի: Աս բանիս համար առ 70 տրամ քրորիւր տը չօ 1, և 5 տրամ ասիտ սիւլֆիւրիք, (զան եազը.) 206 տրամ ջրով խեցեղէն ամանի մէջ լեցուցած դիր խուցին մէջ տեղը, և պատուհանները և դռները գոց պահէ տասուերկու ժամ. ետքը պատուհանները բաց, և ահա ասանկով բոլորովին կը չնջուի հոտը:

Պատերը կրով ճերմկցնելու ատեն՝ որպէս զի քսուողին վրայ չաղտոտի, պէտք է խառնել կրին մէջ քրորիւր տը ոուտ ։ — Տանը մէջ վէռնիճոտ կամ ներկած տախտակամածները պէտք է սրբել տարուան մէջ շատ անզամ, որպէս զի երկար ատեն մաքուր և փայլուն մնան: Զատոնք սրբելու համար կը գործածեն լաթ մը կծիկ ըրած կամ սպունգ մը քիչ մը թրջած խոնաւ ցուցած . ասանկ խոնաւ լաթով սրբելէն ետքը՝ նորէն սրբելու է չոր լաթով մը՝ որ առջի փայլունութիւնը առնու: Այսպէս ալ ծաղկեայ թղթերը եթէ վեռնիճոտած են, կրնան սրբուիլ զգուշութեամբ: Եւ որչափ աւելի յաճախ սըրբուին ասոնք, այնչափ աւելի երկար ատեն նորի պէս կը մնան: Տան մը մէջի ամէն կահ կարասիքը եթէ ուշադրութեամբ յաճախ մաքրուելու ըյլան, շատ տարիներ նոր, մաքուր կը մնան: Բայց եթէ անհոգութեամբ թողուին, մէկ երկու տարիէն ամէն բան հինցած աղտոտ կ'երևան . որուն պատճառը ժամանակը չէ, այլ անհոգութեամբ աղտոտ գործածեն է:

Բազմոցները և աթոռները մաքուր պահելու համար երկար ատեն, աղեկ սովորութիւն է վրանին ծածկոյթ անցընել կամ ճերմակ և կամ ծաղկեայ կրտաւէ. և այս հարկաւոր է աւելի ամառուան մէջ. որովհետև լցուր և փոշին

շուտով գունաթափի կ'ընեն գունաւոր կերպասները . և կամ առանց ծածկութի եղած ատեն , գլուխ և ձեռք կռթըն ցընելու տեղուանքը աստղագործ բեհեզ զով կը ծածկեն . որ երբ աղտոտի , կը հանեն կը լուան . որ և նստարաններուն տեսքը չաւրեր , ու զանոնք աղտոտելէն կը պահէ : Մարմարիոնէ փայլուն կարասիքները շատ երկար ատեն մաքուր կը պահուին , բաւական է որ վրանին փայլունութիւնը կերող բան չի թափի , ինչպէս է թթու ջուրը լեմնին : Իսկ մարմարիոնին փայլունութիւնը պահելու համար պէտք է երբեմն քիչ մը ձիթոտած բարակ լաթի կտորով մը շփել , ետքը ուրիշ բարակ լաթով մը սրբել՝ որ ձէթը բոլորովին ջնջուի : — Փայտեղէն կարասիքը երբ երկար ատեն օդ տեսնելով փայլունութիւնին կը կորսնցընեն , կը նորոգուիլ այս կերպով : Առ 100 տրամ դեղին մեղրամոմ , հալեցու կակուղ կրակի վրայ , և 25 տրամ որբանէթ , (գըրմըզը լիսանի սէվր .) փոշի ըրած մէկաեղ աղէկ մը խառնելէն ետե , (այս որբանէթին խառնելը գոյն տալու համար է ,) հաստ լաթէ անցու , և ետքը դիր մէջը 100 տրամ բեեկնի խէժ , (թիրէմէնթին .) ու խառնէ ինչուան որ պաղի : Գործածելու ատեն քիչ մը լեցու փայտին վրայ , ու բրդէ լաթը կծիկ ըրած՝ անով տարածէ , ետքը ուրիշ բրդէ լաթի կտորով սաստիկ շփէ՝ ինչուան որ աղէկ փայլի՝ առանց մնալու վրան կպչուն մեղրամոմ : Այս բաղադրութեամբ ամէն տեսակ փայտեղէն կը նաև փայլեցնել . և թէ որ կ'ուղես դեղնազոյն փայլեցնել որբանէթին տեղ դեղին փայտի փոշի գործածէ : Վէռնիճուտ կարասեաց փայլունութիւնը նորոգելու համար պէտք է նորէն վեռնիճուտ կը ծախսեն ներկավաճառները . բայց ուզողը ինքիրեն ալ դիւրաւ կը նայ ընել առանց գործաւորի կարօւելու : Այս վէռնիճը պատրաստ չինած կը ծախսեն ներկավաճառները . բայց ուզողը ինքիրեն ալ դիւրաւ կը նայ չինել . որուն վրայ ուրիշ հատուածի մէջ պիտի խօսինք : Բայց վէռնիճը տալէն ետքը պէտք է զզուշութիւն ընել որ չդպչուի ,

կամ վրան փոշի չի նստի՝ ինչուան որ աղէկ մը չորնայ : Այս զզուշութիւններով տան մը կարասիքը կրնայ շատ երկար ատեն նոր լաւ վիճակի մէջ մնալ , և մաքուր վայելուշ երկնալ , որով կը նան ընտանիք իրենց չափուն համեմատ կարգաւորեալ բնակարան ունենալ :

Հայելին և ուրիշ ապակիները մաքրելու համար լաւագոյն կերպն այս է , կէս օխա եռացեալ ջրոյ մէջ լեցու չորս հինգ դրգալ քացախ , որուն մէջ ձգէ 20 տրէմ կաւ . ջուրը եփելու ատեն կաւին հաստ մասը տակը կը նստի , մնացած բարակ մասունքը ջրոյն հետ խառնուելով՝ կաթնորակ գոյն մը կու տայ ջրոյն : Այս ջուրը զզուշութեամբ ուրիշ ամանի մէջ առած կը գործածուի : Նախ տարածէ ջուրը հայելոյն երեսը , երբորքիչ մը ցամքի , շփէ բարակ բամբակի կամ բրդէ կտաւի կտորով մը , քիչ մը համբերութեամբ , բոլորովին նոր կը դառնայ հայելին և պատուհանը , նաև որ և իցէ ապակեղէնները . ետքը փետրոյ աւելով թօթափէ մնացած կաւի փոշին եղերքներէն :

Շիշերը և հասարակ գաւաթները սովորական կերպով կը մաքրուին՝ մէջերնին մնխրով և հաւկթի կեղեսով ցօղուելով . և դրսի երեսնին մաքրելու համար՝ որ և իցէ տեսակ կապոցի թուղթը ջրոյ մէջ լուծէ , ու խիւսի պէս ըրած , անով շիշերը շփէ , և նորի պէս կը փայլին :

Ոսկէզօծ պղնձեղէնը երբ կը սենայ փոշիէ , մուսէ , կամ երկար ատեն օդի մէջ բաց կենալէն , պէտք կ'ըլլայ նորէն ոսկէզօծել տալ : Բայց ըստ կարի երկար ատեն իրեն փայլունութիւնը պահելու համար՝ պէտք է ստէպ եռացեալ թեթև օճառի ջրոյ մէջ խօթել , և քիչ մը ետքը նոյնպէս եռացեալ մաքուր ջրոյ մէջ . ետքը բաց օդոյ մէջ ցամքեցնելէն ետե , թեթև սպիտակաղեղ (խատիւպէճ) քած կակուղ կաշով շփէ փայլուն մասերը . իսկ աղտոտ մասերը եռացած ջրով բաւական մաքրուած է :

Վէռնիճուվ ձեւացուցած սուտ պղնձեղէն զարդերը երկար չեն դիմանար . և շուտ աղտոտելէն ետե , զարդ ընելու

տեղ՝ գէշ տեսք մը կ'ընեն։ Արծաթեղինի գործածութիւնը հիմա շատ պակսած է։ կալվանական հնարքով արծաթազօծած և ոսկէզօծած կը գործածեն սեղանին ամէն գործիքները, որ առողջութեան համար ալ աղէկ է։ որովհետեւ արծաթէ կահ շինելու համար պէտք է որ մէջը պղինձ խառնեն, այն պատճառաւ արծաթեղէնք կրնան ժանգոտիլ և առիթ ըլլալ թիւնաւորելու։ իսկ կալուանական հնարքով արծաթազօծելու համար պէտք է զուտ արծաթ գործածել։ անոր համար այսպէս արծաթազօծածը ամենին չի կրնար ժանգոտիլ։

իսկ արծաթեղէնները մաքրելու համար սպիտակաղեղը ջրով զանգելով թեթև խիւս շինէ և արծաթեղինին վրրայ քսէ, ու երբ կը չորնայ, ամենարարակ լաթով մը աղէկ մը շփէ։ և այսպէս արծաթեղէնը կը փայլի նոր շինածի պէս։ Արծաթեղէնները կրնան մաքրուիլնաև եղնիկի եղներ կրով։ կէս ոխա ջրոյն մէջ 25 տրէմ եղներ կիր՝ ձգէ ու եռացու միշտ խառնելով։ և սաստիկ եռացու ատեն ձգէ մէջը բարակ հին լաթի մը կտոր, և շարունակէ եռացընելը՝ ինչուան որ բոլորովին լաթը մալակնի կրին զանգուածով։ եռքը լաթը չորցու օդոյն մէջ բռած։ և այս լաթով կը շփես արծաթեղէնները և պղնձեղէնները։ կալվանական հնարքով արծաթազօծածները փայլեցնելու համար՝ այս կերպս աւելի աղէկ է։

Եղի մէջ եփած հաւկիթի մէջ եթէ արծաթեղէնը մոռցուի, սևագոյն կ'արատաւորի, որ վերի ըսած կերպով չի մաքրուիր. այլ պէտք է բարակ մը տարածել մուրը հին կաշի ձեռնոցի կտորի մը վրայ, և անով շփել արծաթեղինին բիծերը. մէկ երկու փայլեկնի մէջ կը մաքրուի, կը փայլի. բայց այսպէս մաքրած արծաթեղէնը պէտք է եռացեալ օճառի ջրէ անցնել։

Խոհանոցին թափծու երկաթէ ապակարուած ամանները մաքրելը խիստ դիւ-

1 Եղնիկը, ոսկը կեր կը շնուի, երկթէ կամ հողէ ամանի մէջ դրած ու վեր ՚ի վերոյ բերանը դրած կրակն մէջ ձգելով ու այրելով։

րին է. քիչ մը եփ ջրով և մէկ նոր ջրն ջանով մը կը մաքրուի ներսիդինին, իսկ դրաի երեսնին մաքրելու կարօտութիւն չունին։ իսկ պղնձեղէնները շատ աղէկ կը մաքրուին մաղած մոխրով և քիչ մը քացախով։ բայց թանագէ (թէ նէքէէ) ամաններուն համար պէտք է մաղած մոխրով և վառելու ձէթով խիւս մը շինել ու թանագին վրան քսել, և քիչ մը ժամանակ անցնելէն ետև նախ լաթով մը շփել, ու ետքը նորէն բարակ բրդէ լաթով մաքրել։

Մ Ի Զ Ա Տ

ԺԱ

Շնչառութիւնը։

Ո՞րն է, հարցնեմ, այն օգտակարագոյն գիւտը որ մարդկութիւնը երբեք կրնայ հնարած ըլլալ. անշուշտ չիք օգտակարագոյն քան զայն որ առ պահպանութիւն մարդկային կենաց կը հայի. և այն ամենայն որ անոր ապականութեանը կը դիմէ՝ չարիք է՝ յիրափ կը քանակ զրուցել։ կայ արդեգք աչքերնուած առջին ազնուագոյն, կարևորագոյն և օգտակարագոյն բան իմին Եսութիւնս։

Եւ սակայն մարդկային հնարագէտ բարբարոսութիւնը հնարեր էր, հնարքտանջանքի, լարէ հանգոյց մը գերանի մը վրայ պրկած. և ահա կեանկը մը որ բոնի վերցնելու էր աշխարհքէս։ գունաթափ, ուժաթափ, զարհուրած, քայլ առ քայլ շիրմին եղեցքը կը յառաջէր. հանգոյցը դժբաղդին վիզը կ'անցուէր՝ ճշդիւ այն տեղն՝ ուր է շնչին անցքը. և երբ յանկարծ մէկ ակնթարթին ոտից ներքեւ երկիրը կը պակսէր, անձն այն ողորմելին՝ երկինքին ու երկրիս մէջ տեղ առկախեալ, առ յաւիտենականութիւն անցքը կը լրացնէր, մինչդեռ շրթունքը յետին բարբառը կ'ուզէր յօդել. այլ անօգուտ տեղ. շնչոյ